«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ Գեղարքունիքի մարզի, քաղ. Վարդենիս , Վ. Համբարձումյան փող. N 14 հասցեյով 05-005-0179-0007 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված խանութի շինության (նախկին բաղնիք և կաթսայատուն) տեխնիկական վիճակի ,դրանում ինքնակամ իրականացված վերակառուցման աշխատանքների ու բակային ճակատին հարակցող տեղամասում տեղակայված ինքնակամ իրականացված սանհանգույցի շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ**

Գեղարքունիքի մարզ ք. Գավառ Ազատությա 2
հեռ: +(374264) 2 23 29 e-mail:haferdgas@mail.ru

«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ


սրքունիքի մարզ ք. Գավառ Ազատության 2
(374264) 2 23 29 e-mail:haferdgas@mail.ru


# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Գեղարքունիքի մարզի, քաղ. Վարդենիս , Վ. Համբարձումյան փող. N 14 հասցեյով 5-005-0179-0007 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված խանութի շինության (նախկին բաղնիք և կաթսայատուն) տեխնիկական վիճակի ,դրանում ընակամ իրականացված վերակառուցման աշխատանքների ու բակային ճակատին արակցող տեղամասում տեղակայված ինքնակամ իրականացված սանհանգույցի շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ՝
ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ
ՏՆՕՐԵՆ՝ Թ. ԳԱՓՈՅԱՆ

Գավառ 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

**13651**

(լիցենզիայի համարը)

ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ

(գործունեության տեսակը)

Տրված է «29 դեկտեմբերի 2009թ.» «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ, 378630, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ք. ԳԱՎԱՌ,

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը,
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունն ու բնակության վայրը)

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

(ստորագրություն)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

(անուն, ազգանուն)

Կ.Տ.

No 28 ՇՄԿ
No 28 MMS
08409435
2

«Հաստատում եմ»

«Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ

Տնօրեն Թ. Գափոյան

« » « » 2024թ.

**Եզրակացություն**

**ՀՀ Գեղարքունիքի մարզի, քաղ. Վարդենիս , Վ. Համբարձումյան փող. N 14 հասցեյով 05-005-0179-0007 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված խանութի շինության (նախկին բաղնիք և կաթսայատուն) տեխնիկական վիճակի , դրանում ինքնակամ իրականացված վերակառուցման աշխատանքների ու բակային ճակատին հարակցող տեղամասում տեղակայված ինքնակամ իրականացված սանհանգույցի շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ**

Աշխատանքը կատարվել է նշված շինությունների սեփականատեր (սեփ. Վկ. N18052020-05-0055) Երանուհի Մարտիրոսյանի առ 23.02. 2024թ. դիմումի համաձայն:

Տեխնիկական հետազննության շրջանակներում կատարվել է նշված հողամասում տեղակայված շինությունների ակնադիտական ուսումնասիրություն:

Հետազննությունը իրականացվել է << Երկրաշարժադիմացկուն շինարարություն, նախագծման նորմեր>> ՀՀՇՆ 20,04-2020, <<Շենքերի ու կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում . Հիմնական դրույթներ >> ,ՀՀՇՆ 20-06-2014- նորմերի և <<Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ >>-ի համաձայն:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի համաձայն դիտարկվող շենքի տարածքը գտնվում է առաջին սեյսմիկ գոտում, որտեղ սահմանված առավելագույն հորիզոնական արագացումը Amax=0.3g (ՀՀՇՆ 20.04-2020,ըստ հավելամաս 1-ի):

Զննվող խանութի շինությունը (նախկինում բաղնիք և կաթսայատուն) փոքր թեքությամբ տեղանքի վրա տեղակայված , հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով 3 հատվածամասերից բաղկացած, ամեն մեկը մոտ 10.0x18.2 մ,մոտ 12.2x26.2մ և մոտ 6.5x11.6մ արտաքին եզրաչափերով ,հասարակական գործառնական նշանակությամբ մեկ հարկանի կառույց է (նկ1) :




Նկ. 1 Կառույցի ընդհանուր տեսքը

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական ու լայնական պատերով և վերնածածկով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնով:

Վերնածածկն իրականացված է հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով և միաձույլ երկաթբետոնից:

2020 թվականին <<Սուրո-Օսկանի >> ՍՊԸ-ի կողմից մշակված նախագծով կատարվել են շինության վերակառուցման հետևյալ աշխատանքներ՝

-Ապամոնտաժվել է շինության տանիքը ու վերնածածկը:

-Ապամմոնտաժվել են շինության որոշ պատեր:

-Պահպանված պատերի որմածքում իրագործվել են միաձույլ երկաթբետոնե սյուներ:

-Շինության կոնստրուկտիվ համակարգը վերակառուցվել է կարկասայինի ,միաձույլ երկաթբետոնե շրջանակների իրագործմամբ:

-Իրականացվել են ժապավենային միաձույլ երկաթբետոնե նոր հիմքեր,իսկ պահպանված հիմքերը ուժեղացվել են ընդլայնման եղանակով:

-Շինության վերնածածկը վերականգնվել է հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերից, հորիզոնական հարթությունում կոշտ սկավառակի աշխատանքը ապահովելու միջոցառումներով:

-Շինությունը ձախ կողաճակատից ընդլայնվել է կարկասային համակարգով հատվածամասից, միաձույլ երկաթբետոնե շրջանակներով, պողպատե ֆերմաներից ու հեծաններից կազմված վերնածածկով:

-Կառույցի երկրորդ հարկի ֆունկցիոնալ կապն ապահովելու համար, բակային ճակատից իրագործվել է պողպատե տարրերից սանդղաբազուկներով և միաճոճ, երկաթբետոնե հարթակով արտաքին աստիճանային համակարգ (նկ4) :




Նկ.4 Արտաքին աստիճանային համակարգի տեսքը

Զննմամբ պարզվեց հետևյալը`

- Խանութի շենքի կրող կոնստրուկցիաները չունեն որևէ նշանակալից ճաքեր, ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ:Դրանք գտնվում են լավ տեխնիկական վիճակում:

- Խանութի շենքը գտնվում է ավարտուն վիճակում(նկ.5) և դրա վերակառուցման աշխատանքները կատարվել են պատշաճ որակով,գործող շիննորմերին համապատասխան:

- Խանութի շենքի աջ կողաճակատի կողմից առկա անավարտ շինությունը չունի որևէ նշանակալից վնասվածքներ և գտնվում է բավարար տեխնիկական վիճակում:

-Իրականացվել է շինության նոր տանիք:

-Շինությունում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ:

Ներկայիս կառույցի աջ կողաճակատի կողմից առկա է մոտ 6.5x11.6մ չափերով անավարտ շինություն, որի հիմքերը իրականացված են խամքարաբետոնե ծածկավերններից, իսկ վերգետնյա պատերն իրագործված են տուֆաքարի երկշերտ շարվածքով երկու շարք բարձրությամբ (նկ.2):




Նկ.2 Անավարտ շինության տեսքը

Կառույցի բակային ճակատին հարող տեղամասում տեղակայված է սանհանգույցի առանձին շինություն (նկ.3),որի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական ու լայնական քարաշար պատերով և փայտե տարրերից վերնածածկով:




Նկ.3 Սանհանգույցի շինության տեսքը




Նկ.5 Խանութի շենքի ներքին տեսքը

Ելնելով հետազննության արդյունքներից խանութի շենքի տեխնիկական վիճակը գնահատվում է լավ,իսկ վնասվածության մակարդակը ,ըստ գործող ՀՀՇՆ 20.04-նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է առաջին աստիճան:

Հաշվի առնելով վերը նշվածը եզրակացվում է՝

-ՀՀ Գեղարքունիքի մարզի,քաղ. Վարդենիս Վ.Համբարձումյան փող.,N14 հասցեյով 06-005-0179-0007 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված խանութի շինությունը պիտանի է բնականոն և անվտանգ շահագործման համար և այն չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ,դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը ,դրանից վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

-Խանութի շենքի աջ կողաճակատի կողմից անավարտ շինության պահպանումը չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը:Դրա շինարարական աշխատանքները տեխնիկապես հնարավոր է հասցնել ավարտին,անհատական մշակված նախագծով:

-Խանութի շենքի բակային ճակատին հարեղ տեղամասում տեղակայված սանհանգույցի շինությունը պիտանի է բնականոն և անվտանգ շահագործման համար:

ԹԻԿ 28 ՇՄԲ
№ 28 ПМК
№ 28 MMS
08409435
2

մասնագետ Ռ. Խաչատրյան